ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-10/8-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 09 -ը մարտի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Է. Հովնանյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **18.12.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-10/8-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***18,300,000 (տասնութ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, **բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:**

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **«ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ք. Երևան, Սունդուկյան փ. 17, 30 |
| Հ/Հ 900011144079 | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02522157 | Հ/Հ 1930061966720100 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | ՀՎՀՀ 00165727 |
| | տնօրեն |
| ՅՈԼՉՅԱՆ | Է. ՀՈՎՆԱՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/8-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 1. | Տնտեսող լամպեր (Լուսադիոդային գլանաձև լամպ T8-120սմ) | հատ | 15000 | 633 | 9,495,000 | 15000 |
| 2. | Տնտեսող լամպեր (Լուսադիոդային գլանաձև լամպ T8-60սմ) | հատ | 15000 | 587 | 8,805,000 | 15000 |
| **Ընդամենը** | | | | | **18,300,000** | |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/8-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 1. | Տնտեսող լամպեր (Լուսադիոդային գլանաձև լամպ T8-120սմ) | 31531300/515 | 9,495,000 | 9,495,000 | 9,495,000 | 9,495,000 | 9,495,000 | 9,495,000 | 9,495,000 | 9,495,000 | 9,495,000 | 9,495,000 |
| 2. | Տնտեսող լամպեր (Լուսադիոդային գլանաձև լամպ T8-60սմ) | 31531300/516 | 8,805,000 | 8,805,000 | 8,805,000 | 8,805,000 | 8,805,000 | 8,805,000 | 8,805,000 | 8,805,000 | 8,805,000 | 8,805,000 |
| **Ընդամենը** | | | **18,300,000** | **18,300,000** | **18,300,000** | **18,300,000** | **18,300,000** | **18,300,000** | **18,300,000** | **18,300,000** | **18,300,000** | **18,300,000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՌՏ ՆՏԱ դեպարտամենտի պետ

**Ն. ՅՈՒԼՉՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ**
տնօրեն

**Է. ՀՈՎՆԱՆՅԱՆ**